

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3

ք. Երևան

13.03.2006թ.

Ներկա էին խորհրդի 72 անդամներից 67-ը:

Նախագահող՝ խորհրդի նախագահ՝ Ս. Սարգսյան:

### Օրակարգում.

1. Երևանի պետական համալսարանի խորհրդի քարտուղարի ընտրություն:
2. Երևանի պետական համալսարանի ռեկտորի ընտրության ընթացակարգում փոփոխությունների և լրացումների կատարում:
3. Ընթացիկ և կազմակերպչական հարցեր:

### 1. Երևանի պետական համալսարանի խորհրդի քարտուղարի ընտրություն:

Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը տեղեկացրեց, որ առկա է ԵՊՀ խորհրդի մի խումբ անդամների դիմում-առաջարկ, որում որպես խորհրդի քարտուղարի թեկնածու առաջարկվում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Ավետիսյանի թեկնածությունը: Ս. Սարգսյանը նշեց սակայն, որ քարտուղարի պարտականությունները ավելի շատ կազմակերպչական են և նախընտրելի կլիներ խորհրդի քարտուղար ընտրել սովորող անդամներից: Խորհրդի նախագահն առաջարկեց Փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ասպիրանտ Դավիթ Հայրապետյանի թեկնածությունը:

Արտահայտվեց ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան Հ. Միրզոյանը՝ նշելով, որ երկար տարիներ ճանաչում է Դ. Հայրապետյանին որպես պարտաճանաչ և օրինակելի ուսանողի, սակայն մտավախություն հայտնեց, որ մեկ տարուց հնարավոր է Դ. Հայրապետյանը դադարեցնի խորհրդի անդամի իր լիազորությունները և խորհուրդը ստիպված կլինի նոր քարտուղար ընտրել:

Դ. Հայրապետյանի թեկնածությունը ներկայացվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքում խորհուրդը որոշեց Դավիթ Հայրապետյանին ընտրել ԵՊՀ խորհրդի քարտուղարի պաշտոնում:

Կողմ՝ 58, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 0:

## 2. Երևանի պետական համալսարանի ռեկտորի ընտրության ընթացակարգում փոփոխությունների և լրացումների կատարում:

Ներկայացնելով օրակարգի 2-րդ հարցը՝ խորհրդի նախագահը ընդերձեց ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգի մշակման հանձնաժողովի կողմից և նախորդ նիստի ժամանակ առաջարկված փոփոխությունները: Այն է՝

➤ 2.2 կետում ռեկտորի ընտրության հայտարարության զետեղման լրատվամիջոցների ցանկում ավելացնել «Республика Армения» և «Կրթություն» թերթերը:

➤ 2.4 կետում ավելացնել, որ հավակնորդը իր գործունեության ծրագիրը ներկայացնում է փակ փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո:

➤ 3.1 կետից հանել այն սահմանափակումը, որ յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանում կարող է առաջադրել միայն մեկ թեկնածու: Ինչպես նաև 3.2 կետը վերաշարադրել հետևյալ կերպ. «ԵՊՀ ռեկտոր կարող է առաջադրվել առնվազն 3 տարվա ղեկավար աշխատանքի փորձ, դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձը»:

➤ 4.2 կետում ավելացնել ե) ենթակետ՝ հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:

➤ 4.7 կետում նշել. «Հարցի և պատասխանի տևողությունը պետք է հակիրճ լինի» ձևակերպումը:

➤ 4.9-ի սկզբում ավելացնել, «Բոլոր թեկնածուներին ուղղված» ձևակերպումը:

➤ 5.4 կետում նշել, որ ռեկտորի ընտրության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը պետք է կազմվի երկու օրինակից:

➤ 5.16-ում ավելացնել, որ արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ հավաքած «կողմ» ձայների քանակի նվազման հաջորդականության:

➤ 5.19-ում նշել, որ ընտրությունը համարվում է չկայացած, եթե քվեարկված երկու կամ ավելի թեկնածուներ միասին չեն հավաքել խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայներ:

➤ 5.29 կետում ավելացնել «խորհրդի կողմից» ձևակերպումը:

Վ. Դումանյանը առաջարկեց քվեակության առաջին և երկրորդ փուլերի կազմակերպման մեկ այլ տարբերակ (կից ներկայացվում է տարբերակը), որտեղ երկրորդ և երրորդ փուլ անցնելու համար թեկնածուների համար առաջարկվում է սահմանված համապատասխանաբար խորհրդի ցուցակային կազմի 1/4 և 1/3 ձայների անցողիկ շեմեր:

Արա Ավետիսյանը պաշտպանեց առաջարկությունը և առաջարկեց ընթացակարգի 5.19-5.25 կետերը փոխարինել Վ. Դումանյանի առաջարկության կետերով:

Առաջարկությունը պաշտպանեցին Գ. Ղազինյանը և Հ. Միրզոյանը:

Վ. Գրիգորյանը նշեց, որ Վ. Դումանյանի առաջարկված տարբերակը նախօրոք խորհրդի անդամներին չի բաժանվել, և բանավոր ծանոթանալով հնարավոր չէ լրջորեն քննարկել նման առաջարկություն:

Վ. Սարգսյանը դեմ արտահայտվեց առաջարկվող փոփոխությանը՝ նշելով վերջինիս թերի կողմերը:

Խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը առաջարկեց հայտարարել 10 րոպե ընդմիջում, որի ընթացքում խորհրդի անդամներին կբաժանվի Վ. Դումանյանի առաջարկված փոփոխության տարբերակը և հնարավոր կլինի շարունակել քննարկումը:

Ընդմիջումից հետո առաջարկվող փոփոխության տարբերակին կողմ արտահայտվեց Ռ. Մարտիրոսյանը՝ նշելով, որ այն խիստ նման է ընտրությունների անցկացման ակադեմիական տարբերակին:

Ռ. Պետրոսյանը առաջարկեց մի քանի խմբագրական փոփոխություններ, այն է.

➤ 2.5 կետում «համար»-ների կրկնությունից խուսափելու համար հանել առաջին «համար»-ը: Նույն ուղղումը մտցնել նաև 2.6 կետում:

➤ 4.2-ի դ) և ե) ենթակետերը փոփոխել տեղերով:

Գ. Եզանյանը առաջարկեց.

➤ փոփոխել տեղերով 5.21 և 5.22 կետերը:

➤ 5.21-ում «եթե քվեարկվել են երկու թեկնածուներ և նրանք» ձևակերպումը փոխել «քվեարկությանը մասնակցած թեկնածուները» ձևակերպմամբ:

Ս. Հախումյանը առաջարկեց հանել 4.5 կետում նշված ռեկտորի թեկնածուի ընտրության նիստին ներկա գտնվելու պարտադրությունը: Սակայն Գ. Ղազինյանը նշեց, որ տվյալ ձևակերպումը անհրաժեշտ է պահպանել:

Յու. Վարդանյանը առաջարկեց նշել նիստի սկսման ժամը, որը խորհրդի նախագահի կողմից առաջարկվեց թողնել կազմակերպչական հարցերի շարքում և չընդգրկել ընթացակարգ, սակայն 4.11 կետում նշված ավարտման ժամկետը ավելացնել ևս մեկ ժամով և ֆիքսել 19.00-ն:

Վ. Սարգսյանը ևս մեկ անգամ անդրադարձավ Վ. Դումանյանի առաջարկված փոփոխություններին՝ նշելով դրանց արդյունավետության ոչ էական տարբերության մասին:

Ա. Քարամյանը առաջարկեց առաջարկված փոփոխությունները դնել քվեարկության՝ չընդգրկելով միայն Վ. Դումանյանի առաջարկված փոփոխությունները՝ պահպանելով 5.19-ից 5.25 կետերը:

Խորհուրդը որոշեց հաստատել առաջարկված փոփոխությունները և հաստատել ԵՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգը:

Կողմ՝ 40, դեմ՝ 7, ձեռնպահ՝ 0 (Ընթացակարգը ներկայացվում է արձանագրությանը կից):

### 3. Ընթացիկ և կազմակերպչական հարցեր:

3.1 Խորհրդի կողմից առաջարկվեց ռեկտորի ընտրության նիստը սկսել ս.թ. մարտի 22-ին, ժամը 12.00-ին:

Որոշվեց ռեկտորի ընտրության մրցութային նիստը սկսել ժ. 12.00-ին:

Կողմ` 47, դեմ` 0, ձեռնպահ` 0:

3.2 Վ. Ասլանյանը խնդրեց խորհրդին ուշադրություն դարձնել ուսանողների քանակի և զբաղեցված տարածքի հարաբերակցությանը` նշելով, որ Երևանի պետական համալսարանում այն չի պահպանվում:

Խորհուրդը նշված հայտարարությունը ընդունեց ի գիտություն:

3.3 Միրզոյանը նշեց, որ ԵՊՀ նախկին «Մեծ խորհուրդը» 2006 թ-ի ԵՊՀ բյուջեն մասնակի է հաստատել` այն թողնելով նորաստեղծ խորհրդի իրավասության ներքո և խնդրեց պարզաբանել, թե երբ է պատրաստվում խորհուրդը քննարկել այդ հարցը:

Նախագահ Ս. Սարգսյանը առաջարկեց քննարկել 2006թ-ի ԵՊՀ բյուջեն ռեկտորի ընտրությանը հաջորդող նիստի ընթացքում:

Որոշվեց 2006թ.-ի ԵՊՀ բյուջեն քննարկել ռեկտորի ընտրությանը հաջորդող նիստի ընթացքում:

Կողմ` 67, դեմ` 0, ձեռնպահ` 0:

3.4 Վ. Դումանյանը խնդրեց պարզաբանել, թե արդյոք խորհրդի նախագահը և քարտուղարը չեն վճարվելու կատարած աշխատանքի դիմաց: Ս. Երիցյանը նշեց, որ համաձայն կառավարության որոշման նման որոշում չի նախատեսվում:

Խորհրդի նախագահ`

Ս. Սարգսյան

Քարտուղար`

Դ. Հայրապետյան

13.03.2006թ.

ք. Երևան